



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28508  
Փետրուար 27, 1984

Արժանաշնորհ  
Տ. Գառնիկ Քհնյ. Հալլաճեան  
Հովիւ Ս. Խաչ Եկեղեցւոյ  
Նախագահ ծխական Խորհուրդի  
Եունիըն Սիթի.

Սիրելի Տէր Գառնիկ,

Ստացած ենք Փետր. 5, 1984 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունուար 29ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր ղիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Ռիչըրտ Ասոյեան  
Ռիչըրտ Պոհաճեան  
Ան Տատայեան  
Չարլզ Կէնճեան  
Զաւէն Յովսէփեան